

ՀԱՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԱՐՎԵՍՏԻ ԵԶՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ. ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ

դասախոս ԵՊԼՀ, ՀԳՊԱ

Իմաստաբանության մեջ հարացուցային իմաստային հարաբերությունները բառերի և արտահայտությունների միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերություններն են: Դրանք ընդգրկում են երեք տիպի իմաստային հարաբերություններ. հոմանշային և տարբերակային հարաբերություններ, որոնք վերաբերում են նշանակության նմանություններին, հակաձային հարաբերություններ, որոնք բառային միջև առաջացնում են հակադիր հարաբերություններ և ստորակարգային հարաբերություններ, որոնք վերաբերում են առավել ընդհանուր և մասնավոր նշանակությամբ բառային իմաստային ստորակարգությանը: Բացի այդ, գոյություն ունեն նաև փոխանունության հարաբերություններ, որոնք հաստատվում են ամբողջի անվան և նրա մասերի անունների միջև¹:

Դարձվածքային տարբերակները դարձվածքը կազմող բաղադրիչների բառաքերականական տարբերակներ են, որոնք նույնն են իրենց իմաստներով և իմաստային ծուլվածության աստիճանով:

Դարձվածքների մի մասը հանդես է գալիս իր մշտական, բառաքերականական մեկ ձևով, մինչդեռ մյուս մասը հանդես է գալիս մեկից ավելի բառաքերականական տարատեսակներով: Հետևաբար, դարձվածքների տարբերակ պետք է համարել միայն՝ բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառի՝ բաղադրիչի քերականական, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչը հանդիսացող բարբառային փոխառյալ բառերն ու բառաձևերը գրականով փոխարինելու դեպքերը:

Դարձվածային տարբերակները, դարձվածային հոմանիշների հետ միասին, դարձվածապաշարի հարստացման միջոցներից են: Ըստ Ա. Նազարյանի՝ հոմանական լեզուներում դարձվածային տարբերակներն օժտված են հետևյալ հատկանիշներով.

ա. *պարկերի ընդհանրություն,*

բ. *հիմնանշանակային-իմաստադարբերակիչ* կամ 'նշանակման' նշանակու-

1 Casadei F., Lessico e semantica, Carocci Editore, Roma, 2003, էջ 52.

թյան բուն լեզվական կողմի ընդհանրություն²,

գ. լեզվում կադարած գործառույթի և կարգային (բառաքերականական) հատկանիշի համընկնում,

դ. նշանակությունների քանակի համընկնում,

ե. բառային անփոփոխակի առկայություն³:

Պատկերի ընդհանրությունը կարևորագույն հատկանիշներից է, որով դարձվածային տարբերակները տարբերվում են դարձվածային հոմանիշներից: Հիմնանշանակային- իմաստադարձերակիչ ընդհանրություն հատկանիշը ենթադրում է, որ դարձվածային տարբերակներն իմաստաբանորեն համարժեք են, թեև կարող են տարբերվել արտահայտչականությամբ և ոճական գունավորմամբ: Ըստ երրորդ հատկանիշի՝ դարձվածային տարբերակները պետք է վերաբերեն դասին, ենթադասին, բառաքերականական կարգին և այլն: Իմաստների քանակի համընկնումը բխում է նախորդ հատկանիշներից: Իրականում, եթե դարձվածային տարբերակներն ունեն պատկերի ընդհանրություն և համարժեք են ըստ *հիմնանշանակային-իմաստադարձերակիչ ընդհանրության*, ապա նրանց նշանակությունների թիվը նույնպես կհամընկնի: Հինգերորդ՝ *բառային անփոփոխակի առկայության* հատկանիշը դարձվածային տարբերակներում ենթադրում է առնվազն մեկ ընդհանուր բաղադրիչի առկայություն՝ իր ողջ կառուցվածքաքերականական տարբերություններով հանդերձ:

Ի վերջո, ըստ Ա. Նազարյանի սահմանման՝ «դարձվածային տարբերակները դարձվածային միավորի կանոններով ամրագրված տարբերակներ են, որոնք բնութագրվում են պատկերի ընդհանրությամբ և հիմնանշանակային-իմաստադարձերակիչ նշանակության ընդհանրությամբ, որոնք համընկնում են ըստ լեզվում կադարած գործառույթի այնպես, ինչպես ըստ իրենց կարգային՝ բառաքերականական նշանակությունների»⁴: Ա. Նազարյանն առանձնացնում է դարձվածային տարբերակների հետևյալ տեսակները. *կառուցվածքա-քերականական* (ծնաբանական, շարահյուսական, շարադասական), *բառային տարբերակներ*, *ոճական տարբերակներ*, *քանակային տարբերակներ* (խոսքը բաղադրիչների ամբողջականության մասին է), *ուղղագրական տարբերակներ*⁵:

Այսպես, իտալերենում ուսումնասիրված արվեստի եզր պարունակող դարձվածացանկում տեղ գտած հետևյալ դարձվածքները վերագրվում են *բառային տարբերակների* տիպին. *essere/stare/trovarsi/finire in un vicolo cieco*՝ լինել/մնալ/գտնվել/հայտնվել փակուղու առջև, *essere/stare/trovarsi/finire in una strada senza*

2 Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, «Ապոլոն» հրատ., Եր., 1993, էջ 455:

3 Նազարյան Ա. Հ., նույն տեղում, էջ 264:

4 Նազարյան Ա. Հ., նույն տեղում, էջ 227:

5 Նազարյան Ա. Հ., նույն տեղում, էջք 228-231:

uscita' լինել/մնալ/գտնվել/հայտնվել անելանելի իրավիճակում essere/arrivare al capolinea' լինել/հասնել գործի ավարտին (բառացի՝ վերջին կանգառին) դարձվածքները նույնպես պատկանում են բառային տարբերակների թվին:

Essere/diventare/farsi di mille colori և cambiare colore' գույն տալ, գույն առնել/հազար գույն ստանալ/գույնը փոխել (հուզմունքից կամ ամոթից) նշանակություն ունեցող դարձվածքները կարող են վերագրվել և՛ բառային, և՛ կառուցվածքաբերականական տիպերին, քանի որ առկա են նաև խնդրառության հարցեր (առաջին շարքում առկա են չեզոք սեռի՝ essere/diventare և կրավորական սեռի՝ farsi բայերը, ինչպես նաև di նախդիրը, մինչդեռ երկրորդում գործ ունենք ներգործական սեռի cambiare բայի հետ, որը պահանջում է ուղիղ խնդիր լրացում, այլապես՝ նույն բայը կարող է նաև չեզոք սեռի լինել) և քանակային տեսակներին, բաղադրիչների անհամապատասխան բաշխման հետևանքով (բացի di նախդրից, առաջին շարքում առկա է նաև mille' հազար թվականը, որը բացակայում է երկրորդում):

Essere/salire sul palcoscenico (di qc)' լինել, բարձրանալ բեմահարթակ և essere/salire/venire alla ribalta' լինել, բարձրանալ/գալ բեմ դարձվածքները, որոնք նշանակում են մեծ համբավ/հեղինակություն ձեռք բերել, կարող են վերագրվել թե՛ բառային (լինել, բարձրանալ և լինել, բարձրանալ/գալ), թե՛ կառուցվածքաբերականական (առաջին շարքում՝ sul բաղադրյալ՝ հոդավորված նախդրի առկայություն և թե՛ (di qc) կամընտիր բաղադրիչների ներուժային առկայություն, մինչդեռ երկրորդում՝ alla բաղադրյալ կամ հոդավորված նախդրի առկայություն), թե՛ քանակային (առաջին շարքում առկա է (di qc) կամընտիր բաղադրիչների՝ բառային տարբերակների քանակային առավելություն՝ երկրորդի նկատմամբ, իսկ երկրորդն էլ իր հերթին ունի venire բառային տարբերակի քանակային առավելություն՝ առաջինի նկատմամբ) տարբերակների շարքերին, քանի որ առկա են երեք տեսակները բնութագրող հատկանիշները:

Essere/stare/premere alle porte' լինել, մնալ/հրել դռներին/դռները և bussare/picchiare alla porta' թակել/ծեծել դուռը դարձվածքների շարքերը ևս, որ ունեն ուրոր է ինչ-որ բան է տեղի ունենալու/պատահելու նշանակություն, շնորհիվ բայական փոփոխականների, կարող են դասվել բառային տարբերակների ինչպես նաև կառուցվածքաբերականական տարբերակների շարքին, քանի որ երկու շարքերի դարձվածքները միմյանցից տարբերվում են նաև թվի կարգով. առաջին շարքը ներկայացնող դարձվածքները միևնույն պատկերն արտահայտում են հոգնակի թվով, իսկ երկրորդ շարքի դարձվածքները՝ եզակի թվով:

Այսպես, *essere di marmo*, որը բառացի նշանակում է *մարմարից լինել, essere duro come un sasso/pietra/ ferro/granito/marmo/muro/zoccolo' բառացի՝ գլաքարի/քարի/երկաթի/ գրանիտի / մարմարի/պատի/հիմքի նման կարծր լինել, essere una statua di ghiaccio' բառացի՝ սառցե արձան լինել*, դարձվածային տարբերակներն ունեն *անզգա, անտարբեր, համառ* լինելու նշանակություն:

Premere alle porte' բառացի՝ դռները հրել և bussare/picchiare alla porta' բառա-

ցի՝ դուռը թակել/ծեծել դարձվածքներն ունեն տարբերակային միևնույն նշանակությունը, այն է՝ ուր-որ է պատահել:

Essere in un vicolo cieco՝ բառացի՝ փակուղու վրա գտնվել, *essere in una strada senza uscita*՝ բառացի՝ առանց ելքի փողոցում գտնվել տարբերակային դարձվածքները փոխաբերաբար նշանակում են փակուղու առջև կանգ առնել, անելանելի իրավիճակում գտնվել:

Mettere/portare su una pista giusta (զո)՝ բառացի՝ մեկին ճիշտ արահեպի վրա դնել/տանել և *mettere/portare su una strada buona (զո)*՝ բառացի՝ մեկին լավ ճանապարհի վրա դնել/տանել դարձվածքները նույնպես տարբերակային հարաբերությունների մեջ են գտնվում միմյանց հետ, քանի որ երկուսն էլ ունեն միևնույն՝ մեկին ճիշտ գործելու ուղին ցույց տալ նշանակությունը:

Ըստ Ա. Սուքիասյանի՝ «դարձվածաբանական տարբերակները դարձվածքը կազմող բաղադրիչների բառաքերականական տարբերակներ են, որոնք նույնն են իրենց իմաստներով և իմաստային ծովածության աստիճանով»: Դարձվածաբանը նշում է, որ «դարձվածքների տարբերակ պետք է համարել միայն՝ բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառի՝ բաղադրիչի քերականական վարիացիաները, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչը հանդիսացող բարբառային փոխառյալ բառերն ու բառաձևերը գրականով փոխարինելու դեպքերը»⁶:

Ի տարբերություն Ա. Նազարյանի՝ Ա. Սուքիասյանը գտնում է, որ դարձվածային տարբերակ չպետք է համարել միևնույն դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչների ուղղագրական կամ բառային չնչին տարբերակները: Ա. Սուքիասյանը դարձվածային տարբերակ է համարում.

«ա. դարձվածը կազմող բաղադրիչի կամ բաղադրիչների քերականական տարատեսականները, ներառյալ միևնույն բաղադրիչի եզակի և հոգնակի գործածության դեպքերը,

բ. երբ դարձվածը կազմող բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը արևմտահայերեն են իրենց քերականական ձևերով, բայց կան նաև դրանց համարժեքները արևելահայ գրական լեզվում,

գ. գրաբարյան քարացած ձևերով կազմված դարձվածը և դրա համարժեք ժամանակակից հայերենի նույն դարձվածը,

դ. երբ որպես նույն դարձվածի բաղադրիչներ հանդես են գալիս մերթ գրական, մերթ բարբառային բառապաշարին պատկանող բառեր, ըստ որում, համապատասխան այդ բաղադրիչները միևնույն իմաստն են արտահայտում, այդ դարձվածները նույնանիշներ են և տարբերվում են միայն ոճական-կիրառական նշանակություններով,

6 Սուքիասյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Եր., 1971, էջ 259:

ե. երբ դարձվածի բաղադրիչներից մեկը կամ մեկից ավելին կարելի է փոխարինել գրական լեզվի նույն նշանակությունն ունեցող բառով, իսկ երբ բաղադրիչը բայ է՝ համապատասխանաբար հարադրավոր բայով, նույն բաղադրիչ-բայի հարադրավոր ձևով,

զ. *դարձվածային տարբերակ պետք է համարել նաև նույն դարձվածի ամբողջական և կրճատ ձևերը, որոնք ոմանց կողմից դիտարկվում են որպես դարձվածքային հոմանիշներ*⁷:

Այսպիսով, ըստ հայ դարձվածաբանության՝ այդ հատկանիշները հիմնականում դարձվածային բաղադրիչների բառաքերականական կամ ոճական որոշ տարբերությունների առկայությամբ կազմված դարձվածաբանական միավորներ են, որոնք, սակայն, միևնույն իմաստն ունեն և նույն դարձվածքն են ներկայացնում:

Այսպես՝ *մեկի ջաղացին ջուր ավելացնել և ջրաղացին ջուր ածել/ավելացնել/լցնել* դարձվածքները կարելի է վերագրել և՛ բարբառային (ջաղաց), և՛ գրական (ջրաղաց) բաղադրիչներ ունեցող տարբերակների, և՛ նույն դարձվածքի ամբողջ և կրճատ ձևերով տարատեսակներին, քանի որ առաջինում առկա կամընտիր բաղադրիչը բացակայում է երկրորդ շարքից:

Մի արշինով չափել և միևնույն արշինով չափել դարձվածքները, որոնք նշանակում են *հավասար վերաբերմունք ունենալ*, կարող են վերագրվել խոսակցական-բարբառային (*մի*) և գրական (*միևնույն*) բաղադրիչներով տարբերակների շարքին: *Չափ ու սահման անցկացնել և չափ ու սահմանը կորցնել* դարձվածքները, որոնք արտահայտում են միևնույն՝ *չափը անցկացնել* գաղափարը, կարող են վերագրվել թե՛ բառային (*անցկացնել և կորցնել* բառային տարբերակներով), թե՛ կառուցվածքաքերականական (վերջինս արտահայտված է առկայացման, որոշակիության առկայությամբ և բացակայությամբ) տարատեսակներին:

Չինական պատ քաշել և չինական պարիսպ քաշել դարձվածքները երկուսն էլ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «*Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*»-ում ընդգրկված են գրքային տարբերակներով և ունեն միևնույն՝ *հարաբերությունները լրիվ խզել* նշանակությունը և իրարից տարբերվում են գլխավոր բաղադրիչի ընտրությամբ:

Ինչպես կարելի է նկատել (*իր*) *կամուրջ/ներ/ը/նավերը այրել* դարձվածքի հնարավոր տարբերակներից, որոնք նշանակում են՝ *վճռական քայլ կատարել*, ապա կարող են ունենալ բառային միավորների տարբեր ընտրություններ՝ *կամուրջ և նավ* (վերջինս դուրս է մնում մեր ուսումնասիրության շրջանակներից, քանի որ արվեստի բառապաշարի մաս չի կազմում), այսինքն՝ *բառային տարբերակի* է հարում, ինչպես նաև *կառուցվածքաքերականականի*, քանի որ տարբերակները

7 Սուքիասյան Ա. Մ., նույն տեղում, էջ 260:

կարող են կազմվել *իր* ստացական դերանվան առկայությամբ կամ բացակայությամբ, թվի կարգի առկայությամբ (*-ներ*) կամ բացակայությամբ և, ի վերջո, առկայացմամբ (*-ը*) կամ վերջինիս բացակայությամբ:

Տունը քանդել և տունը գլխին քանդել դարձվածային տարբերակները, որոնք նշանակում են *մեծ վնաս հասցնել*, բացի գլխավոր իմակից, պարունակում են նաև գործողի, պատճառականության գաղափար: Մինչդեռ *տունը գլխին փուլ գալ և տունը գլխին քանդվել*՝ *մեծ դժվարության մեջ ընկնել*, դարձվածքներից առաջինում հարադիր բայը չեզոք սեռի է, իսկ երկրորդի բայը՝ կրավորական:

Այսպիսով, երկու լեզուներում *դարձվածային տարբերակները* բաղադրիչների բառաքերականական, ոճական և բարբառային որոշ տարբերությունների առկայությամբ կազմված դարձվածաբանական միավորներ են, որոնք միևնույն իմաստն ունեն և նույն դարձվածքն են ներկայացնում: Դարձվածային տարբերակները, դարձվածային հոմանիշների հետ միասին, լեզվի հարստացման միջոցներից են:

Բանալի բառեր՝ հոմանիշ, հականիշ, դարձվածային տարբերակ, բազմիմաստություն, հարացուցային իմաստային հարաբերություն, արվեստի եզր, իմաստատարբերակիչ հատկանիշ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1984. - 371 էջ:
2. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1986. - 363 էջ:
3. Բեդիրյան Պ. Ս., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., Ե., 1973. - 231 էջ:
4. Սուքիասյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1971. - 294 էջ:
5. Назарян А. Г., Фразеология современного французского языка, «Высшая Школа», М., 1987. - 288 с.
6. Черданцева Т. З., Язык и его образы, изд. «Международные отношения», М., 1977. - 140 с.

ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

7. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2011. - 1404 էջ:
8. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 1975. - 614 էջ:
9. Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2009. - 1237 էջ:

PARADIGMATIC AND SEMANTIC CHARACTERISTICS OF PHRASEOLOGICAL UNITS CONTAINING ART TERM IN ITALIAN AND ARMENIAN. PHRASEOLOGICAL VARIANTS

ANAHIT MKRYAN
lecturer YSLU /YSAFA

The current paper aims at analyzing paradigmatic and semantic relations of some idiomatic expressions containing an art term in Italian and Armenian. An attempt has been made to reveal semantic similarities and dissimilarities, as well as to mark out the most regular types of the above mentioned phraseological units from structural, morphological, lexical, stylistic, syntactic, quantitative and geographic viewpoint.

Key words: synonyms, antonyms, idiomatic variants, polisemy, paradigmatic semantic relations, art term, distinctive characteristic

ПАРАДИГМАТИЧЕСКИЕ СМЫСЛОВЫЕ ОТНОШЕНИЯ ВО ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ СОЧЕТАНИЯХ, СОДЕРЖАЩИХ ТЕРМИНЫ ИСКУССТВА

/на материале фразеологических вариантов итальянского и армянского языков/

АНАИТ МКРЯН
преподаватель ЕГУЯСН им.Брюсова, ГАХА

Настоящая статья посвящена изучению фразеологических вариантов итальянского и армянского языков, содержащих термины искусства, как одного из типов парадигматических семантических отношений.

Целью исследования является выявление посредством проведения сопоставительного анализа общих и различительных черт вышеназванного семантического явления в словарных единицах изучаемых языков, а также выделение их наиболее регулярных типов: структурно-грамматических /морфологических, синтаксических/, лексических, стилистических, ареальных, количественных, орфографических и т.д.

Ключевые слова: синоним, антоним, фразеологический вариант, полисемия, парадигматическое семантическое отношение, термин искусства, дифференциальный признак





3. Բենցցո Գոցցոլի.
Մոգերի երկրպագությունը.
Կոզիմո Մեդիչի Ավագը
ավանակի վրա նստած (դրվագ)



4. Բենցցո Գոցցոլի.
Մոգերի երկրպագությունը.
Պապանի Լորենցո Մեդիչին
մոգի կերպարում (դրվագ)



5. Գաբրիել Գյուրջյան. Ջրոջընդ գյուղը
Էփրուդ, 1926, կտ., յուղ, 32,5 x 40,5, ՀԱՊ



6. Անդրանիկ Կիլիկյան.
Խնկո Ապր «Մկների ժողովը» առակի նկարազարդումներից